ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N. 17 հատուկ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի դիմումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից՝ 27360000 (քսանյոթ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված թվով մեկ հատ 2026 թվականի արտադրության FOTON e TOANO մակնիշի էլեկտրական մեքենան սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ին:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N. 17 հատուկ դպրոցը կրթական ծառայություններ է տրամադրում կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների երրորդ, չորրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաներին՝ նպաստելով երեխաների կրթական և զարգացման նպատակների իրագործմանը, նախապայման է ստեղծում երեխաների հաղորդակցման, ինքնուրույնության հմտությունների ձևավորման և ամրապնդման համար:

Այս պահին դպրոցն ունի համապատասխան տրանսպորտային միջոցի կարիք, որը հնարավորություն կտա ապահովել շարժունակության դժվարություններ ունեցող սովորողների կանոնավոր և անվտանգ տեղափոխումը՝ նվազեցնելով նրանց դպրոց հաճախելու հետ կապված խոչընդոտները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ